

## ՎԱԿՈՆ ՊԱՆԴՈԿ ՄԸ

Դեռ շատ ժամանակ չկայ քանի որ Ամերիկոյ Միացեալ Նահանգաց Տէրութիւնը իր երկրին միջէն երկաթուղի մը ձգելով, երկու Ռվկիանոսները՝ այս ինքն Խաղաղականը և Ատլանդականը իրարու կապեց:

Արդ ճանապարհորդը Ս. Ֆրանչիսկոսէ Ելելով, որ Խաղաղականին ափանցը վրայ շինուած է, եօթը օր շարունակ ճանապարհորդելով՝ նիւ Եօրք կը հասնի: Ասանկ երկայն ճանապարհորդութեան համար, յայտնի է որ ուղեորդ իրենց զիւրութեան ու հանգստեան համար շատ բաներու պէտք ունին. և այս ամեն պիտոյից խնամքով հոգ տարած է երկաթուղույն վարչութիւնը: Դիւրութեանց մէկը այն պանդոկ վակոն ըսուածներն են, որ կատարեալ պզտի պանդոկներ են, ամենայն զիւրութիւններով զարդարուած, նման շոգենաւուց առաջին կարգի սենեկաց:

Այն ճանապարհորդը որ վերոյասացեալ վակոնները կ'ընտրեն, փափուկ փետրալից անկողին մը կը գտնեն հանգչելու. կրնան սեղան նստիլ իրենց կերակուրը ուտելու համար, լրազիրներ կը գտնեն ընթերցման, և մէջը նստած՝ գրեթէ կը մոռնան որ անհուն ցամաքի մը վրայ կը թռչին:

Մեր հոս զրած պատկերը այդ պանդոկ վակոն ըսուածներէն մէկը կը ներկայացընէ:

## ՊԻՆԿԵՅԼ ԼԵՐԱՆՑ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

Հայկական զրոյցք Սուրբ Գրոց զրախտը Պինկէօլի լերան վրայ կը նշանակեն, այս բանիս հաստատութիւն սեպելով լերան վրայ գտնուած քաղաքաց և բերդից հին աւերակները, անոնց կողերուն յուռթի և առատ բուսաբերութիւնը, իր վայրենի այզիները, և իրմէ բղխող չորս գետերը, որք այն

ժամանակ ծննդոց գրքին չորս մեծամեծ գետերն պիտի համարուէին:

Պ. Վիլհելմ Շդրեքը<sup>1</sup>, պաշտօնեայ 'ի ծառայութեան Դրան, այս լերանս վրայ քննողական արշաւանք մ'ըրաւ, ընդ Պ. Ռոպերդ Տալայէլ, Անդղիացի հիւպատին կրղիրումի:

Էրգիրումէն դէպ 'ի հարաւ ուղղուելով՝ Պինկէօլի ճամբան Փալանտգէնի ստորոտէն կ'անցնի, որ է բարձրագոյն սար լերանց գոտոյ մը՝ որ կը բաժնէ զեփրատ՝ Երասմի վերին ընթացքէն: Ճանապարհորդք այս սարիս վրայ ելան, ելք դժուարայաղթ. զառ 'ի վայրը անհնարին վախուտ է, սրածայր և հարթ խճաքարանց վրայ քայլելու է. ասդիս անդին բռնելու կամ կպչելու բուսոց թուփեր կան. գագաթէն, որ ձիւնով լեցուած մարած հրաբուխի բաժակ մըն է, կը տեսնուի կրղիրումի ամրող դաշտը և մինչև այն լեռներն՝ որ Սեաւ ծովու եզերքը կը հասնին: Փալանտգէնի գագաթն (Եռացմամբ ջրոյ չափուած) 3200 մեդր բարձրութիւն ունի: Շդրեքը և Տալայէլ, անկէց իջնելով երասմի հովիտը՝ անցան Գղըլ կէշիտ ըսուած գետակին հունը, որ իր ափանցը կարմիրագոյն ապառաժիցը պատճառաւ՝ այս պէս կը կոչուի. գետակից մըն է Երասմի, 15 կամ 20 ոտք լայն: Երկրորդ օրն, Տիւղ-եիւրիւտիւ վտակն այլ անցան (20 ոտք լայն՝ ուր շատ կարմրախայտ ձուկ<sup>2</sup> կը գտուի) և Գղըլ կէշիտի օժանդակ մըն է, յետոյ նաև Երասմի գետէն անցան, որ հոս միայն քսան ոտք լայնութիւն ունի և մեդրէ մը պակաս խոր. հովտիս այս մասը բաւական լայն և քիչ մը ճախճախուտ է, բայց վերի և ստորին կողմերը՝ գետն նեղ խորածորոց և խոխոմից մէջ կը վազէ:

Պինկէօլէն կ'իջնեն յերասմի, (կամըրջամերժն այն երասմի ըստ Լատինացւոց), որ իր գետակից կուրին հետ կ'ընթանայ 'ի ծովս կասպից, Չարպուհուր, Մուրատայ գլխաւոր օժանդակն, Խը-

1 Օսմանեան ակրութեան զինուորական պատաման մէջ է և կոչուի Բէշատ պէս:

2 Ալա պալքէլ.

նուսի գետն, կէօնիւկ-Սու, և այլն : Այն  
հեղեղն որ յետոյ Երասմի անունը կը  
կրէ և նախ Պինկէօլ—չայ կ'ըսուի, կը  
բղիէ մեծ ու պղտիկ լճակներէ, որ կը  
ձևանան հալած ձիւներէ : Այս լճակաց  
պատճառաւ է որ լեռն Պինկէօլ կ'ըսուի :

Թօփրագ գալէն և Գար գալէն երկու  
հին հրաբուղիսք են : Տէմիր գալէի կա-  
տարը ցամաք քարէ պատերու մնա-  
ցորդք կան . կ'ըսեն թէ երկաթեայ ա-  
մրաշէն գուռ մը զիսաւոր մուտքը կը  
ձևացընէր, որ յետոյ փոխադրուած է  
մերձակայ Խընուս քաղաքը : Պ. Շղրե-  
քը այն պատերը աշխարհակալ Լէնկ-  
թիմուրի գործք կը համարի, ինչպէս  
նաև ուրիշներ այլ նոյն կողմերը : Խա-  
նօթ դէպք մ'է, կ'ըսէ . որ Լէնկթիմուր  
այս լերանս վրայ հարսանեաց հանդէս-  
ներ կատարել տուաւ, որք երկար ա-  
տեն տևեցին . զինուորական գնդերով  
պատերազմներ ձևացուց, և անշուշտ  
ամրոցի վրայ յարձակմունք ալ ձեա-  
ցուցին : Կարելի է թիմուր այս բանիս  
համար իր զօրացը շինել տուած ըլլայ  
բերդից, պարսպաց, քաղաքաց և մարտ-  
կոցաց նմանութիւններ, որք իրեն շատ  
դիւրին էին, վասն զի անթիւ անհամար  
զօրականաց կը հրամայէր, և Տէմիր գա-  
լէի սարաւանդին շատ լաւ կը յարմա-  
րին այս տեսակ չէնքեր : Թիմուր աշ-  
խարհակալին անունէն՝ Փիշ մը խան-  
գարելով կը թուի լերան անունն ալ:  
Ուրեմն Տէմիր գալէն թիմուրի բերդ  
կ'ուզէ ըսել<sup>1</sup> :

Ըստ վեց դիտողութեանց եռացեալ  
ջրով, Պինկէօլի բարձրութիւնն 3120  
մեդր է . բայց ըստ ծանրաշափական  
քննութեանց Պ. Զիհաշեւի աւելի մեծ է  
բարձրութիւնն, այսինքն 3750 մեդր :

Պինկէօլի գագաթէն՝ շատ ընդարձակ  
է տեսարանն, Տրապիզոնի ծովեղերեայ  
լեռներէն մինչև Այրարատայ վսեմա-  
կերպ բրդաձե գագաթունքը : « Պին-  
կէօլ լեռն լի է Քրդաց խեղճ հանգրուան-  
ներով, սակայն ամառն՝ կենդանու-

1 Թիմուր աւելի քակող քան շնորհ էր . մեզի  
հաւանական չերեար որ Թիմուր հոս բան շնած  
ըլլայ :

թիւնն շատ վառվուուն է : Տաք օրերուն  
սկիզբը բոլոր շրջակայ Քիւրտք, կա-  
նամք և զաւկաք, իրենց հօտերովը կու-  
դան, հետերնին բերելով զգեստնին և  
զեղեցիկ և հաստատուն բրդէ կապիրտ-  
ներ, որ իրենց կանանց և աղջկանց ա-  
մենէն ճարտար չէնքն են : Իրենց գորչ  
վրանաց տակ խումբ խումբ կը բանա-  
կին, յետոյ երր առաջին ցուրտն հաս-  
նի՝ յետ կը գառնան : Շատ հեռու տե-  
ղուանքէ մեծախումբ հօտեր կը զրկուին  
հոս Պինկէօլի ընտիր խոտէն ճարակե-  
լու, և ետքը Հալէպ, Դամասկոս և ին-  
չուան ՚ի կոստանդնուպօլիս ճամբելու  
համար, ուր անշուշտ պիտի չկարենա-  
յին համարի, եթէ Պինկէօլի արօտից  
զօրութիւնն առած չըլլային՝ ճամբուն  
վրայ չընճաթելու համար :

« Զով օդ, պանչելի յստակութիւն,  
առատ և հոտաւէտ ալպեան բոյսք, պա-  
րարտ մարգագետինք, որ ընդդիմակ  
երեսյթ մը կը ձևացընեն՝ ահաւոր և  
լերկ ապառաժից հետ, զեղեցիկ և կար-  
կաջաձայն վտակք, լիճք և աղբեղք՝  
Պինկէօլը այն կողմի վայրենի բնակչաց  
եղեմ մը կը ձևացընեն : Անմահութեան  
լիճ մը կայ կ'ըսեն հոն . բայց ուր է ար-  
դեօք : Կ'երեւայ թէ ոչ ոք գտած է զայն .  
վասն զի եթէ ամենայն ոք կը մեռնի,  
ըսել է որ գեռ ոչ ոք անոր Ջրէն ըմպե-  
լու բաղդն ունեցեր է : Բայց ինչ փոյթ  
այս բանիս, երր լերան օդն մարմնոց ա-  
ղէկ առողջութիւն և մտաց զօրութիւն  
կու տայ : Մեր վրայ իսկ շատ մեծ և  
զմայլական տպաւորութիւն մ'ըրաւ, և  
առանց տրտմութեան չկրցանք թողուլ.  
և հիմա իսկ հոս այս վոսփորոնի հիա-  
պանչ ափանց վրայ ըլլալով կը դառ-  
նամ հայրենախտութեամբ մը՝ դէպ 'ի  
բարձր Հայոց լերանց վրայ՝ որ այնպէս  
ցուրտ և մերկ են, սակայն այնպէս ալ  
հուժկու և զեղեցիկ<sup>2</sup> » :

1 Nostalgie.

2 « Et ici même, aux bords enchantés du  
Bosphore, je me retourne avec nostalgie vers  
les monts de la haute Arménie, froide et nue,  
mais forte et belle ».